ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2022 Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ



Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

1.1. Ամփոփ տեղեկություն 2022 թ. մարտ-ապրիլ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին 4

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը 4

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների 6

2.2. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների 8

3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 9

4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 12

5. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ 14

5.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի 14

5.2. Հանրակրթական առարկաների միջին միավորներն ըստ հոսքերի 15

6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 16

6.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 16

6.2. Արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ հոսքերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 18

7. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 19

8. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 21

9. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ 22

Եզրակացություն 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարբերաբար կազմակերպում է արտաքին ընթացիկ գնահատում: Այն հնարավորություն է տալիս արձանագրելու այդ հաստատությունների ավագ դասարաններում սովորողների առաջադիմությունը: Այդ նպատակով 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին հանրահաշվից և օտար լեզուներից իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների շրջանում:

Նպատակը

2022 թվականին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման հիմնական նպատակը վերոնշյալ առարկաներից 11-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումն է: Արտաքին ընթացիկ գնահատում անցկացնելու համար կազմվել են 11-րդ դասարանի ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան թեստեր՝ սեպտեմբերից հունվար ամիսներին աշակերտների ուսումնասիրած թեմաների շրջանակներում:

Ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման համար ընտրվել են Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզից, որտեղ ներդրվել են առարկայական նոր չափորոշիչներ ու ծրագրեր) 39 ավագ, 51 միջնակարգ դպրոց, 6 վարժարան, 1 կրթահամալիր և ոչ պետական 1 դպրոց: Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցել է 5368 աշակերտ: Ընդհանուր բացակայությունը կազմել է 8.4 տոկոս:

Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպել և անցկացրել են Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչները, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Գրավոր աշխատանքների կատարման տևողությունը եղել է 60 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 8 տարբերակ:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել են առարկայական մասնագետների կողմից, արդյունքները անցկացվել են ձևաթղթերի համապատասխան դաշտերում, որից հետո ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները փոխանցվել են համապատասխան դպրոցներին՝ դասամատյաններում գրանցելու համար:

Վերլուծության իրականացումը

Վերլուծությունն ամբողջությամբ իրականացվել է IATA, Excel, ACCESS, SPSS ծրագրերի միջոցով: Արտաքին և ներքին գնահատման համակարգերի արդյունքների, ինչպես նաև հանրակրթական առարկաների համեմատությունները, որոնք բնույթով և սանդղակավորմամբ տարբեր են, ներկայացված են առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությամբ (Item response theory-IRT), մինչդեռ հանրակրթական ուսումնական հաստատություններին արդյունքները տրամադրվել են Z-սանդղակով՝ ներքին գնահատմանը համադրելի դարձնելու համար: Առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությունը (այսուհետև՝ IRT[1]) դասական տեսության բարելավված մոդելն է, որը հնարավորություն է տալիս ստանալու առավել ճկուն և հավաստի տեղեկություններ:

Արտաքին ընթացիկ գնահատականներից բացի, ստեղծվել է նաև ներքին գնահատականների տվյալների բազա՝ աշակերտի 11-րդ դասարանի 1-ին կիսամյակի գնահատականների հիման վրա:

[1] IRT տեսության մանրամասն նկարագրությունը տրված է հետևյալ վերլուծության մեջ http://www.atc.am/files/verlucutyunner/2016/2016_petrvar_yntacik.pdf (էջ 4)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ամփոփ տեղեկություն 2022 թ. մարտ-ապրիլ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշակերտների մասնակցությունը 2022 թ. մարտ-ապրիլ ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատմանը:

Աղյուսակ 1

Առարկան	Հայտագրված աշակերտների ընդհանուր թիվը	Մասնակցած աշակերտ-ների թիվը	Չմասնակցած աշակերտների		Անբավարար գնահատական ստացած աշակերտների	
			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հանրահաշիվ	5368	4925	439	8.2	634	12.9
Անգլերեն	2918	2674	241	8,3	125	4.7
Ռուսաց լեզու	2316	2103	212	9,2	220	10.5
Ֆրանսերեն	94	84	10	10.6	30	35.7
Գերմաներեն	37	31	6	16.2	6	19.4

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Արտաքին ընթացիկ գնահատման թեստերի կառուցվածքը բոլոր առարկաների համար ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Բոլոր առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորով՝ բացառությամբ հանրահաշվի ընդարձակ պատասխանով առաջադրանքներից (0-2 միավոր):

Աղյուսակ 2

Առարկան	Առաջադրանքների քանակը			Առավելա-գույն միավորը
	ընտրովի	կարճ	ընդարձակ	
Հանրահաշիվ	8	5	2	17
Օտար լեզուներ	10	8	2	20

Գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների։

Աղյուսակ 3

Քննությունների արդյունքների գնահատման սանդղակներ				
Նախնական միավորը (0-16)	**Գնահատականը (1-10)**		**Նախնական միավորը (0-20)**	**Գնահատականը (1-10)**
0-1	1		0-1	1
2	2		2-3	2
3-4	3		4-5	3
5-6	4		6-7	4
7-8	5		8-10	5
9-10	6		11-13	6
11-12	7		14-15	7
13-14	8		16-17	8
15-16	9		18-19	9
17	10		20	10

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են հանրակրթական առարկաների միավորների բաշխման հիստոգրամները: Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):

Հիստոգրամ 1



Հիստոգրամ 2



Հիստոգրամ 3



Հիստոգրամ 4



Հիստոգրամ 5



Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը համաչափ են՝ բացառությամբ «Անգլերեն» առարկայի, որի միավորների բաշխման կորը շեղված է դեպի բարձր միավորները:

Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 4

Առարկան	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը[2]	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)[3]
Հանրահաշիվ	4925	5.04	0.02	1.5
Անգլերեն	2674	7,10	0,04	2,06
Ռուսաց լեզու	2103	5,38	0,04	1,60
Ֆրանսերեն*	84	5,29	0,29	2,66
Գերմաներեն*	31	6,65	0,44	2,46

**-ով նշված են այն առարկաները, որոնք, մասնակիցների քիչ թվով պայմանավորված, չեն ներառվել հետագա վերլուծության մեջ*

Ամենաբարձր միջին միավորները գրանցվել են «Անգլերեն» և «Գերմաներեն» առարկաներից, մյուս առարկաներից միջին միավորները մոտ են 1-10 գնահատականների սանդղակի միջին միավորին (5.5): Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են:

2.2. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Գնահատականների խմբերի բաշխման ուսումնասիրությունը և համեմատությունն իրականացվել է IRT մաթեմատիկական մոդելի կիրառմամբ, որով գնահատվել է սովորողների պատրաստվածության մակարդակը՝ հիմնվելով տարբեր բարդության առաջադրանքների ճիշտ պատասխանի հավանականության գնահատման վրա: IRT-ն թույլ է տալիս գնահատականները ստանդարտացնել և բերել գնահատման ընդհանուր համակարգի, որը համեմատելի է դարձնում արտաքին ընթացիկ գնահատման առարկաների գնահատականները:

Սույն վերլուծության մեջ գնահատականները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի՝ անբավարար (1-3), բավարար (4-5), լավ (6-8) և գերազանց (9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

[2]Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:

[3]10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:

Դիագրամ 1



Դիագրամում տեսնում ենք, որ անբավարար (1-3) գնահատականների ամենամեծ տոկոսը գրանցվել է հանրահաշվից, ամենափոքր տոկոսը՝ անգլերենից, և հակառակը՝ գերազանց (9-10) գնահատականների մեծ տոկոսը գրանցվել է անգլերենից, փոքր տոկոսը՝ հանրահաշվից, ինչը ենթադրելի էր այս առարկաների միջին միավորներից. «Հանրահաշիվ» առարկայի դեպքում գերակշռել են 4 և 5 գնահատականները, «Անգլերեն» առարկայի դեպքում՝ 6-8 գնահատականները:

3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին և ներքին գնահատումների գնահատականները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն փոխվվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 4-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև ներքին գնահատման ժամանակ կիրառվում են բազմաբնույթ գործիքներ՝ ի տարբերություն արտաքին գնահատման, սակայն ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվության գործոնը:

Աղյուսակ 5

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հանրահաշիվ	Արտաքին	5.04	0.02	1.5
	Ներքին	5,90	0,03	2,2
Անգլերեն	Արտաքին	7,10	0,04	2,1
	Ներքին	7.33	0.04	1.9
Ռուսաց լեզու	Արտաքին	5,38	0,04	1,6
	Ներքին	6.86	0.04	1.9
Ֆրանսերեն*	Արտաքին	5,29	0,29	2,7
	Ներքին	8.08	0.15	1.3
Գերմաներեն*	Արտաքին	6,65	0,44	2,5
	Ներքին	7.75	0.43	2.5

Աղյուսակում տեսնում ենք, որ ներքին գնահատման դեպքում միջին միավորները 5,9-ից (հանրահաշիվ) 8,08 (ֆրանսերեն) միավորների միջակայքում են, արտաքին գնահատման դեպքում՝ 5,04-ից (հանրահաշիվ) 7,1 (անգլերեն) միավորների միջակայքում: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից, հետևաբար, այս առարկայի ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունն ամենափոքրն է՝ 0,23 միավոր: Այս տեսանկյունից ամենամեծ տարբերությունը գրանցվել է ֆրանսերենից՝ 2,79 միավոր: Մեծ է նաև ռուսաց լեզվից արտաքին և ներքին գնահատումների գնահատականների տարբերությունը՝ 1,5 միավոր:

Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են 2022 թվականին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման գնահատականների և ներքին գնահատման գնահատականների բաշխման համադրությունները «Հանրահաշիվ», «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաներից:

Հիստոգրամ 6



Հիստոգրամ 7



Հիստոգրամ 8



Հիստոգրամներում տեսնում ենք, որ ներքին գնահատման դեպքում գերակշռել են բարձր գնահատականները՝ բացառությամբ 10 գնահատականի: Արտաքին գնահատման դեպքում՝ միջին գնահատականները:

4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների 55,5 տոկոսը եղել են աղջիկներ, 44,5 տոկոսը՝ տղաներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են բոլոր առարկաներից վիճակագրական տվյալներ՝ ըստ սեռերի:

Աղյուսակ 6

Առարկան	Սեռը	Մասնակիցների		Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
		թիվը	տոկոսը		
Հանրահաշիվ	աղջիկ	2722	55,3	5,2	1,45
	տղա	2203	44,7	4,9	1,49
Անգլերեն	աղջիկ	1630	61	7,5	1,942
	տղա	1044	39	6,5	2,087
Ռուսաց լեզու	աղջիկ	1008	47,9	5,8	1,578
	տղա	1095	52,1	5,0	1,542

Աղյուսակում տեսնում ենք, որ օտար լեզուներից աղջիկները նախընտրել են «Անգլերեն» առարկան, տղաները՝ «Ռուսաց լեզու» առարկան:

Ստորև բերված դիագրամում ներկայացված է բոլոր առարկաներից աշակերտների միջին միավորների համեմատությունն ըստ սեռերի:

Դիագրամ 2



Ըստ սեռերի միջին միավորների համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները 0,3-1 միավորով բարձր են տղաների միջին միավորներից:

Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:

Հիստոգրամ 9



Հիստոգրամ 10



Հիստոգրամ 11



Տղաների և աղջիկների միավորների բաշխվածության ամենամեծ տարբերությունը «Անգլերեն» առարկայից է:

5. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

5.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի

Դիագրամ 3-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների տոկոսային թվերն ըստ հոսքերի:

Դիագրամ 3



Միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրով: Մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտների 32 տոկոսը նախապատվությունը տալիս է հումանիտար հոսքին, 20,1 տոկոսը՝ տնտեսագիտական հոսքին, 12,6 տոկոսը՝ բնագիտական հոսքին, ֆիզմաթ հոսքն ընտրել է աշակերտների 6 տոկոսը:

5.2. Հանրակրթական առարկաների միջին միավորներն ըստ հոսքերի

Աղյուսակ 7-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների թվերն ըստ հոսքերի և նրանց միջին միավորները բոլոր առարկաներից: Մգացված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:

Աղյուսակ 7

Առարկան / Հոսքը	Հանրահաշիվ			Անգլերեն			Ռուսաց լեզու		
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Ինժեներական	21	**5,24**	0,8	16	**7,19**	1,1	4	**5,50**	0,6
Բնագիտական	620	**5,33**	1,4	291	**7,13**	2,0	318	**5,84**	1,6
Հումանիտար	1571	4,53	1,3	954	7,04	2,1	559	**5,43**	1,5
Ընդհանուր	1314	4,74	1,4	526	6,63	2,3	736	4,74	1,5
Տնտեսագիտական	992	**5,74**	1,5	706	**7,44**	1,9	259	**5,71**	1,5
Ֆիզմաթ	296	**6,21**	1,5	150	**7,60**	1,7	144	**5,88**	1,3
Արհեստագործական	13	4,08	0,8	5	6.00	2,3	9	**5,44**	0,5
Ռուսական հոսք	98	4,80	1,0	26	7,08	1,8	74	**7,15**	1,3

Աղյուսակում համեմատելով աշակերտների միջին միավորներն ըստ հոսքերի՝ տեսնում ենք, որ ինժեներական, բնագիտական, տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում աշակերտների միջին միավորները բոլոր առարկաներից բարձր են ընդհանուր միջին միավորից: Ընդհանուր հոսքում բոլոր առարկաներից գրանցվել են ցածր արդյունքներ:

6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

6.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 66,5 տոկոսը ավագ դպրոցների, 19,4 տոկոսը միջնակարգ դպրոցների, 11,4 տոկոսը վարժարանների, 2,1 տոկոսը կրթահամալիրի և 0,6 տոկոսը ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներ են: Աղյուսակ 9-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Մգացված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Աղյուսակ 8

Առարկան	Առարկայի ընդհանուր միջին միավորը	Ավագ դպրոց			Միջնակարգ դպրոց			Վարժարան			Կրթահամալիր			Ոչ պետական դպրոց		
		Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հանրահաշիվ	5,04	3275	4,98	1.5	955	4.63	1.3	563	**5.8**	1.2	101	**5,26**	1,2	31	**6,65**	1,14
Անգլերեն	7,1	1948	7,04	1,9	296	5,88	2,2	329	**7,98**	1,7	79	**8,25**	1,5	22	**9,4**	1,0
Ռուսաց լեզու	5,38	1223	**5,62**	1,5	632	4,57	1,5	219	**6,31**	1,5	22	**6,18**	0,6	7	**6,71**	0,9

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վարժարանների, կրթահամալիրի և ոչ պետական դպրոցի աշակերտները բոլոր առարկաներից ցուցաբերել են առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր արդյունքներ: Ավագ դպրոցներում, բացի ռուսաց լեզվից, իսկ միջնակարգ դպրոցներում բոլոր առարկաներից ցուցաբերել են առարկայի ընդհանուր միջին միավորից ցածր արդյունքներ:

Հետևյալ դիագրամներում համեմատվել են ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտների միջին միավորները երեք առարկաներից:

Դիագրամ 4



Դիագրամ 5



Դիագրամ 6



6.2. Արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ հոսքերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Հետևյալ դիագրամում ներկայացված են աշակերտների պատրաստվածության արդյունքները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և հոսքերի: Միջնակարգ դպրոցի աշակերտների արդյունքները երևում են միայն ընդհանուր հոսքում, քանի որ աշակերտները սովորում են միայն այդ ծրագրով:

Դիագրամ 7



Դիագրամ 8



Դիագրամ 9



7. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Դիագրամ 10-ում ներկայացված է 2022 թ. արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների միջին միավորների դիրքերը սանդղակի միջին միավորի նկատմամբ: Դիագրամի յուրաքանչյուր ուղղահայաց գծի վրա գտնվում են տվյալ ուսումնական հաստատության միջին միավորները երեք առարկաներից. կապույտով նշված է հանրահաշվի, կարմիրով՝ անգլերենի, կանաչով՝ ռուսաց լեզվի միջին միավորները, իսկ դեղին կետագիծը սանդղակի միջին միավորն է (5.5): Միջին միավորները դասավորված են «Հանրահաշիվ» առարկայի միջին միավորների աճման կարգով:

Դիագրամ 10



Դիագրամ 10-ում տեսնում ենք, որ հանրահաշվից ցածր արդյունք գրանցած ուսումնական հաստատությունները ցածր արդյունք են գրանցել նաև մյուս առարկաներից:

8. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են աշակերտների միջին միավորներն ըստ վարչատարածքային միավորների: Մգացված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:

Աղյուսակ 9

Առարկան	Ընդհանուր միջին միավորը	Երևան	Շիրակ	Լոռի	Արագա-ծոտն	Սյունիք	Արա-րատ	Գեղար-քունիք	Արմա-վիր	Վայոց ձոր	Կոտայք
Հանրահաշիվ	**5,04**	5,02	**5,44**	**5,18**	4,81	4,96	4,44	4,36	4,91	4,75	**6,03**
Անգլերեն	**7,1**	**7,32**	**7,69**	**7,64**	5,98	**7,37**	6,43	5,72	6,53	6,35	**7,39**
Ռուսաց լեզու	**5,4**	**6**	**5,44**	**5,68**	4,76	5,27	4,49	4,43	4,84	4,6	**5,96**

Լավագույն արդյունքներով աչքի են ընկել Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերը: Ցածր արդյունքներով առանձնացել են Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերը, որտեղ ոչ մի առարկայից աշակերտները չեն գրանցել ընդհանուր միջին միավորից բարձր արդյունք:

9. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 98 հանրակրթական ուսումնական հաստատություններից 28-ը եղել են խոշոր քաղաքների, 14-ը՝ միջին քաղաքների, 10-ը՝ փոքր քաղաքների, 41-ը՝ գյուղերի և 5-ը՝ բարձրլեռնային գյուղերի ուսումնական հաստատություններ:

Դիագրամ 11



Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ քաղաքային բնակավայրերի աշակերտների պատրաստվածության մակարդակն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերի աշակերտներինը:

Եզրակացություն

2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 98 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների շրջանում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում: Արտաքին գնահատման նպատակն էր 11-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումը և առաջադիմության շարժի գնահատումը:

- **Ընտրանքը**

Արտաքին ընթացիկ գնահատման համար ընտրվել են Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզից, որտեղ ներդրվել են առարկայական նոր չափորոշիչներ ու ծրագրեր) 39 ավագ, 51 միջնակարգ դպրոց, 6 վարժարան, 1 կրթահամալիր և ոչ պետական 1 դպրոց: Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցել է 5368 աշակերտ: Ընդհանուր բացակայությունը կազմել է 8.4 տոկոս:

- **Միավորների բաշխման բնութագրիչները**

Ամենաբարձր միջին միավորները գրանցվել են «Անգլերեն» և «Գերմաներեն» առարկաներից, մյուս առարկաներից միջին միավորները մոտ են 1-10 գնահատականների սանդղակի միջին միավորին (5.5): Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են:

- **Գնահատականների խմբերի համեմատությունն ըստ առարկաների**

Դիագրամում տեսնում ենք, որ անբավարար (1-3) գնահատականների ամենամեծ տոկոսը գրանցվել է հանրահաշվից, ամենափոքր տոկոսը՝ անգլերենից, և հակառակը՝ գերազանց (9-10) գնահատականների մեծ տոկոսը գրանցվել է անգլերենից, փոքր տոկոսը՝ հանրահաշվից, ինչը ենթադրելի էր այս առարկաների միջին միավորներից. «Հանրահաշիվ» առարկայի դեպքում գերակշռել են 4 և 5 գնահատականները, «Անգլերեն» առարկայի դեպքում՝ 6-8 գնահատականները:

- **Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը**

Ներքին գնահատման դեպքում գերակշռել են բարձր գնահատականները՝ բացառությամբ 10 գնահատականի, արտաքին գնահատման դեպքում՝ միջին գնահատականները: Ներքին գնահատման դեպքում միջին միավորները 5,9-ից (հանրահաշիվ) 8,08 (ֆրանսերեն) միավորների միջակայքում են, արտաքին գնահատման դեպքում՝ 5,04-ից (հանրահաշիվ) 7,1 (անգլերեն) միավորների միջակայքում: «Անգլերեն» առարկայի ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունն ամենափոքրն է՝ 0,23 միավոր: Այս տեսանկյունից ամենամեծ տարբերությունը գրանցվել է ֆրանսերենից՝ 2,79 միավոր և ռուսաց լեզվից՝ 1,5 միավոր:

- **Վերլուծություն ըստ սեռերի**

Ըստ սեռերի միջին միավորների համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները 0,3-1 միավորով բարձր են տղաների միջին միավորներից: Տղաների և աղջիկների միավորների բաշխվածության ամենամեծ տարբերությունը «Անգլերեն» առարկայից է:

- **Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի**

Միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրով: Մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտների 32 տոկոսը նախապատվությունը տալիս է հումանիտար հոսքին, 20,1 տոկոսը՝ տնտեսագիտական հոսքին, 12,6 տոկոսը՝ բնագիտական հոսքին, ֆիզմաթ հոսքն ընտրել է աշակերտների 6 տոկոսը: Ինժեներական, բնագիտական, տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում աշակերտների միջին միավորները բոլոր առարկաներից բարձր են ընդհանուր միջին միավորից: Ընդհանուր հոսքում բոլոր առարկաներից գրանցվել են ցածր արդյունքներ:

- **Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վարժարանների, կրթահամալիրի և ոչ պետական դպրոցի աշակերտները բոլոր առարկաներից ցուցաբերել են առարկայի միջին միավորից բարձր արդյունքներ: Ավագ դպրոցներում բացի ռուսաց լեզվից, իսկ միջնակարգ դպրոցներում բոլոր առարկաներից ցուցաբերել են առարկայի միջին միավորից ցածր արդյունքներ:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների**

Լավագույն արդյունքներով աչքի են ընկել Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերը: Ցածր արդյունքներով առանձնացել են Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերը, որտեղ ոչ մի առարկայից աշակերտները չեն գրանցել ընդհանուր միջին միավորից բարձր արդյունք:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ բնակավայրերի տիպերի**

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքային բնակավայրերի աշակերտների պատրաստվածության մակարդակն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերի աշակերտներինը: